ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 113/10

Քաղ. Երեւան 31 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/1) քննարկեց «ԻՄԻՋ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվության ընկերության 2010թ. մայիսի 5-ի «BIG BOARD» (հայտի համար՝ 20090555) համակցված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը։

Մերժման համար հիմք են հանդիսացել "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետը եւ "Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի" 12.3-րդ եւ 90.8-րդ կետերը, համաձայն որոնց «BIG BOARD» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ, քանի որ նշում է ծառայության մատուցման տեսակը։ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության ու Կարգի 90.28-րդ կետի համաձայն այդ արտահայտությունն ապրանքային նշանում ներառված է որպես չպահպանվող տարր։

Բողոքարկողը իր բողոքում փաստել է, որ «ԻՄԻՋ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը 03.05.2009թ. դիմել է Մտավոր սեփականության գործակալություն /հայտ N 20090555/, «BIG BOARD» ապրանքային նշանը գրանցելու համար։ 2010թ. մարտի 23-ին ստացել է «Ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների» բաժնի տրամադրած Որոշումը, համաձայն որի ապրանքային նշանը գրանցվել է, սակայն «BIG BOARD» անվանումը համարվել է պահպանության ոչ ենթակա այն

պատճառաբանությամբ, որ «BIG BOARD» անվանումը նշում է ծառայության մատուցման տեսակը այն է ԳՈՎԱԶԴ:

Բողոքարկողը նշում է, որ վերոհիշյալ պատճառաբանությունը համարում է ոչ տեղին եւ չհիմնավորված հետեւյալ հիմունքներով՝

1. BOARD բառը անգլերենից թարգմանաբար ունի բազմաթիվ նշանակություններ, որից միայն մեկն է նշանակում վահանակ, այն էլ ոչ անպայման ԳՈՎԱԶԴԱՅԻՆ:

2. «BIG BOARD» արտահայտությունը անգլերենից թարգմանաբար կարող է ընկալվել որպես "ՄԵԾ տախտակ, վահանակ, եւ այլ" եւ այս բառակապակցությունը բացարձակապես չի արտահայտում որեէ ծառայության մատուցման տեսակ:

3. Եթե նույնիսկ այդ նշանակությունը լինի միակը եւ հստակ նշի ծառայության մատուցման տեսակը, համաձայն "Ապրանքային ն սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" ՀՀ օրենքի հոդված 11-ի դ) ենթակետի, այն կարող է ներառվել ապրանքային նշանի մեջ, եթե դա չի կազմում նշանի գերիշխող մասը, ինչը այս դեպքում նույնպես առկա չէ:

4. Հայաստանի Հանրապետությունում գործող ապրանքային նշանների գերակշիռ մասը բառակապակցության մեջ ունի միանշանակորեն ծառայություն կամ ապրանք բնութագրող տարր, որը սակայն հիմք չի հանդիսացել դրանց չգրանցման համար, քանի որ հանդիսացել է ապրանքային նշանի մասը:

Ելնելով վերը նշվածից, բողոքարկողը խնդրում է վերանայել մերժման մասին որոշումը եւ թույլ տալ օգտագործել «BIG BOARD» արտահայտությունը, որպես ինքնուրույն պահպանության օբյեկտ:

Բողոքը ներկայացրեց կոլեգիայի անդամ պրն.Ա.Բաբայանը, նա նշեց, որ 2010 թվականի մարտի 23-ի կրկնական փորձաքննության որոշմամբ ապրանքային նշանը գրանցվել է, սակայն «Բիգ Բորդ» անվանումը համարվել է պահպանության ոչ ենթակա այն պատճառաբանությամբ, որ «BIG BOARD» անվանումը նշում է ծառայության մատուցման տեսակը այն է ԳՈՎԱԶԴ: Պրն.Ա.Բաբայանը ներկայացրեց օրենքի դրույթները, որոնք մերժման հիմք են հանդիսացել:

Կոլեգիայի անդամ պրն. Ա. Բաբայանը նշեց, որ կոլեգիայի անդամների ընդհանուր քննարկման արդյունքում որոշվեց վերանայել մերժման հիմքը եւ ինչպես իր բողոքում նշել էր բողոքարկողը, «BIG BOARD» բառակապակցությունը բացարձակապես չի արտահայտում ծառայության մատուցման տեսակը եւ օրինաչափ չէ, որ բոլոր գովազդային ընկերությունները օգտագործեն այդ արտահայտությունը, հետեւապես, կոլեգիան գտնում է, որ կարելի է գրանցել համակցված ապրանքային նշանը՝ իրավական պահպանություն տալով նաեւ «BIG BOARD» բառակապակցությունը:

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել «ԻՄԻՋ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բողոքը ամբողջությամբ եւ գրանցել «BIG BOARD» (հայտի համարը՝ N20090555) հայտարկված ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան